ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Միսակ Ավագյան
Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ԽՍՀՄ փլուզումից հետո ձեռնարկվել են ինտեգրացիոն փոխհամագործակցության բազմաթիվ փորձեր, որոնց հիմնական նպատակը հանդիսանում էր մաքսային միության կամ ընդհանուր շուկայի ձևավորումը: Չնայած այդ փորձերին՝ դրանց իրական սկզիբը դրվեց 2000 թվականին ԵվրԱզԷս-ի ստեղծման մասին պայմանագրի կնքմամբ, որն էլ դարձավ Եվրասիական տնտեսական միության ձևավորման հիմքը: ԵԱՏՄ-ն, որի փաստացի գործունեությունը սկսվել է 2015 թվականի հունվարի 1-ից, բացի ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժի ապահովումից, նախատեսում է նաև տնտեսության տարբեր ոլորտներում կոորդինացված, համաձայնեցված և միասնական քաղաքականության իրականացում: Այն իր դրական և բացասական դրսևորումներով հանդերձ, անդամ երկրների միջև տնտեսական փոխհամագործակցության և ինտեգրման թերևս ամենաբարձր մակարդակ ունեցող կառույցն է, որ երբևէ ձևավորվել է եվրասիական տարածաշրջանում:

Հիմնաբառեր. ինտեգրում, մաքսային միություն, ընդհանուր շուկա, փոխադարձ առևտուր, կոոպերացում, տնտեսական բարեփոխում, մրցակցություն, համաշխարհային շուկա, վերազգային կառույց

Հետխորհրդային տարածքում ինտեգրացիոն խմբավորումների ձևավորման անհրաժեշտության վերաբերյալ հարցը վերջին երկու տասնամյակի ընթացքում դարձել է գիտական և հասարակական քննարկման առարկա: ԽՍՀՄ փլուզումից հետո ձեռնարկվել են ինտեգրացիոն փոխհամագործակցության բազմաթիվ փորձեր, որոնց հիմնական նպատակը հանդիսանում

էր մաքսային միության կամ ընդհանուր շուկայի ձևավորումը: Այդ փոր-ձերից շատերը, սակայն, այդպես էլ մնացին թղթի վրա:

Հետխորհրդային տարածքում տնտեսական ինտեգրման հիմքը դրվեց 1991 թվականի դեկտեմբերի 8-ին, երբ Բելառուսի, Ռուսաստանի և Ուկ-րաինայի ղեկավարների կողմից ստորագրվեց համաձայնագիր Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) ստեղծման մասին: Արդեն իսկ 1991 թվականի դեկտեմբերի 21-ին Ալմա-Աթայում ստորագրվեց Համա-ձայնագրի լրացուցիչ արձանագրություն, որի համաձայն՝ Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Մոլդովայի, Տաջիկս-տանի, Թուրքմենստանի, ՈՒզբեկստանի, Ուկրաինայի հանրապետություն-ները և Ռուսաստանի Դաշնությունը ձևավորեցին Անկախ Պետությունների Համագործակցությունը: Վերջինիս 1993 թվականին անդամակցեց նաև Վրաստանը, որը, սակայն, Ռուսաստանի հետ հարաբերությունների վատ-թարացումից հետո 2009 թվականի օգոստոսի 18-ին պաշտոնապես դադա-րեցրեց իր անդամությունը կառույցին: Համագործակցության հիմնական նպատակներից էր անդամ պետությունների բազմակողմանի և հավասա-րակշռված տնտեսական ու սոցիալական զարգացումը ընդհանուր տնտե-սական տարածության շրջանակներում, ինչպես նաև միջպետական համա-գործակցությունը և ինտեգրումը:

1993 թվականի սկզբից ԱՊՀ անդամ տարբեր երկրներ միմյանց միջև առավել սերտ տնտեսական հարաբերություններ զարգացնելու նպատակով սկսեցին կնքել նոր միջազգային համաձայնագրեր, որոնք ենթադրում էին տարածաշրջանային տնտեսական փոխհամագործակցության ավելի ակ-տիվ գործընթացներ, քան դրանք տեղի էին ունենում ԱՊՀ շրջանակներում: Դրանցից առաջինը 1993 թվականի սեպտեմբերի 7-ին Ռուսաստանի, Բելա-ռուսի, Հայաստանի, Ղազախստանի, Ուզբեկստանի և Տաջիկստանի միջև կնքված «Նոր տիպի ռուբլու գոտու ստեղծման պրակտիկ միջոցառումների մասին» համաձայնագիրն էր, որը շատ շուտ մատնվեց մոռացության: Նախկին տնտեսական կապերի վերականգնմանը և հետխորհրդային տա-րածքի վերաինտեգրմանն ուղղված նախաձեռնություններից էր նաև ԱՊՀ անդամ երկրների կողմից 1993 թվականի սեպտեմբերի 24-ին ստորագրված «Տնտեսական միության ստեղծման մասին» պայմանագիրը և 1994 թվա-կանի հոկտեմբեր 21-ին ստորագրված «Ազատ առևտրի գոտու ստեղծման մասին» համաձայնագիրը, որոնց նպատակը ընդհանուր առմամբ, շուկա-յական հարաբերությունների հիմքի վրա ընդհանուր տնտեսական տարած-քի ձևավորումն էր, փոխադարձ առևտրում մաքսատուրքերի և քանակական սահմանափակումների աստիճանական վերացումը, ԱՊՀ անդամ չհանդի-սացող երկրների նկատմամբ իրականացվող առևտրային քաղաքականու-թյան կոորդինացումը, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող տնտե-սական նախագծերի համատեղ իրականացումը, միջձյուղային և ներձյու-ղային կոոպերացմանն աջակցումը, գիտատեխնիկական համագործակցու-թյունը և այլն: Այս և նման համաձայնագրերը ոչ միայն չգործեցին, այլև

չվավերացվեցին անգամ պայմանագրի կողմ հանդիսացող երկրների կողմից: Դրան նպաստում էր նաև ԱՊՀ անդամ երկրների միջև առկա խորը միջպետական հակասությունները, ռազմական կոնֆլիկտները, քաղաքական և տնտեսական տարաձայնությունները: Արդյունքում ԱՊՀ երկրների մի մասը եկավ այն համոզման, որ տնտեսական ինտեգրացիոն խմբավորումը կարող է արդյունավետ գործել միայն սահմանափակ թվով մասնակից երկրների համախմբման դեպքում, քանի որ որքան շատ են պայմանագրի կողմերը, այնքան դժվար է վերջիններիս միջև փոխզիջումային լուծումներ գտնելը:

Ընդհանրապես եվրասիական լուրջ և խորը ինտեգրման անհրաժեշտության մասին առաջին անգամ խոսել է Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևը Մոսկվայի պետական համալսարանում 1994թ. մարտի 29-ին իր ելույթի ժամանակ: Մատնանշելով Եվրոպական միության արձանագրած հաջողությունները՝ վերջինս նշել է, որ ԱՊՀ-ն լիովին չի համապատասխանում ժամանակի օբյեկտիվ պահանջներին, իսկ համագործակցության մասնակից երկրները մերձենալու փոխարեն ավելի են հեռանում միմյանցից: Այդ իսկ պատճառով Նազարբաևը երկրներին առաջարկեց «կամավորության և իրավահավասարության սկզբունքներով ձևավորված նոր միջպետական միավորման հիման վրա անցում կատարել փոխհարաբերությունների որակապես նոր մակարդակի»[1] և նշեց, որ որպես այդպիսի միավորում կարող է հանդիսանալ Եվրասիական միությունը (ԵԱՄ): Այդ կապակցությամբ 1994 թվականի հունիսի 3-ին Ղազախստանի նախագահի կողմից ներկայացվեց «Պետությունների Եվրասիական միություն ձևավորելու մասին» նախագիծ, որով պայմանականորեն «Եվրասիական միություն» կոչվող կազմակերպությունը սահմանվեց որպես «բազմակողմանի ինտեգրման ներուժ ունեցող իրավահավասար անկախ պետությունների միություն՝ ուղղված յուրաքանչյուր մասնակից երկրի ազգային-պետական հետաքրքրությունների իրացմանը»[2]: Ըստ այդ փաստաթղթի՝ ԵԱՄ-ն անկախ պետությունների ինտեգրման ձև է, որի նպատակն է հետխորհրդային տարածքում կայունության, անվտանգության և սոցիալ-տնտեսական արդիականացման ամրապնդումը: Նախագիծը նախատեսում էր ԵԱՄ ձևավորման հիմնական սկզբունքներն ու մեխանիզմները, ինչպես նաև այն վերազգային մարմինների ստեղծումը, որոնց միջոցով կառույցի շրջանակներում պետք է կարգավորվեին և կառավարվեին քաղաքական, տնտեսական, գիտական, մշակութային, կրթական, պաշտպանական և բնապահպանական ոլորտները: ԵԱՄ-ի ստեղծման նպատակը, ըստ փաստաթղթի, հանդիսանում էր «համաձայնեցված տնտեսական քաղաքականության իրականացումը և մասնակից երկրների կողմից տնտեսական բարեփոխումների շրջանակներում անցկացվող համատեղ ծրագրերի պարտադիր կա-

1 Տես «Первый Президент Республики Казахстан Нурсултан Назарбаев. Хроника Деятельности. 1994–1995 годы». ред.-изд. группа: М. Б. Касымбеков (и др.), – Астана: Деловой Мир Астана, 2011, էջ 331:
2 Տես Проект «О формирования Евразийкого Союза государств», [էլեկտրոնային ռեսուրս]՝ http://www.ng.ru/specfile/2000-11-10/13_not_ussr.html

տարումը»[3]:

Նշենք, որ Ղազախստանի նախագահի ինտեգրման նախաձեռնությունը միանշանակ չընդունվեց հետխորհրդային շատ երկրների ղեկավարների կողմից, քանի որ ԽՍՀՄ փլուզումից հետո ազգային անկախության և ինքնիխշանության ամրապնդման խնդիրը փաստացի հակասում էր այդ երկրների միջև տնտեսական համագործակցության զարգացմանը[4]:

Հետագայում հետխորհրդային երկրների միջև կնքվել են եվրասիական տարածքում ինտեգրացիոն գործընթացի զարգացմանն ուղղված բազմաթիվ նոր միջազգային պայմանագրեր, որոնցից է 1995 թվականի հունվարի 6-ին ստորագրված «Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի Հանրապետության միջև Մաքսային միության մասին» համաձայնագիրը, որով կողմերը՝ Ռուսաստանը և Բելառուսը, պայմանավորվեցին ձևավորել Մաքսային միություն՝ նպատակ ունենալով մասնակից երկրներում տնտեսավարող սուբյեկտների միջև ազատ տնտեսական փոխազդեցության համար ապահովել սոցիալ-տնտեսական առաջընթաց, երաշխավորել տնտեսությունների, ազատ ապրանքաշրջանառության և բարեխիղճ մրցակցության կայուն զարգացումը, ամրապնդել երկրների տնտեսական քաղաքականության կոորդինացումը, ապահովել ազգային տնտեսությունների համակողմանի զարգացումը, ստեղծել պայմաններ ընդհանուր տնտեսական տարածքի ձևավորման և Մաքսային միության անդամ պետությունների՝ համաշխարհային շուկա ակտիվորեն դուրս գալու համար: Այս համաձայնագրի կարևոր առանձնահատկությունն այն էր, որ առաջին անգամ սահմանվեցին տարածաշրջանային տնտեսական ինտեգրման բնականոն գործընթացն ապահովող միասնական մաքսային տարածքի ձևավորման հետևյալ հիմնական ուղիները.

- սեփական երկրի տարածքում ծագած ապրանքների մաքսատուրքերի, հարկերի և համանման գանձումների, ինչպես նաև քանակական սահմանափակումների վերացում մասնակից պետությունների միջև առևտրում,
- երրորդ երկրների նկատմամբ միասնական առևտրային ռեժիմի, ընդհանուր մաքսային սակագների և արտաքին առևտրի ոչ սակագնային կարգավորմանն ուղղված միջոցառումների մշակում և կիրառում[5]:

Վերոնշյալ համաձայնագրի կնքումից մի քանի օր անց՝ 1995 թվականի հունվար 20-ին, արդեն իսկ երեք երկրների՝ Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության միջև կնքվեց «Մաքսային միության մասին» նոր համաձայնագիր, ըստ որի՝ հա-

3 Տես Проект «О формирования Евразийкого Союза государств», [էլեկտրոնային ռեսուրս]՝ http://www.ng.ru/specfile/2000-11-10/13_not_ussr.html

4 Տես Евразийский экономический союз. Вопросы и ответы. Цифры и факты, М.: Евразийская экономическая комиссия, 2014, էջ 10:

5 Տես Соглашение о Таможенном союзе между Российской Федерацией и Республикой Беларусь от 6 января 1995 года, [էլեկտրոնային ռեսուրս]՝ http://www.tsouz.ru/Docs/IntAgrmnts/Pages/Dogovor_06011995.aspx

մաձայնագրի կողմերը պետք է ձևավորեին միասնական Մաքսային միություն, որի գործունեության նպատակները, սկզբունքները, մեխանիզմները, զարգացման փուլերը, մաքսատուրքերի, հարկերի բաշխման կարգը, ժամանակավոր սահմանափակումների ներմուծման և մաքսային վերահսկողության պայմանները սահմանվում են 1995 թվականի հունվարի 6-ին կնքված «Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի Հանրապետության միջև Մաքսային միության մասին» համաձայնագրով[6]: 1996 թվականի մարտի 29-ին Մաքսային միությանը միացավ նաև Ղրղզական Հանրապետությունը, իսկ 1999 թվականի փետրվարի 2-ին՝ նաև Տաջիկստանի Հանրապետությունը:

Հետագայում՝ 1996 մարտի 29-ին, կնքվեց «Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզական Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական և հումանիտար ոլորտներում ինտեգրման խորացման մասին» պայմանագիրը, որով կողմերը պայմանավորվեցին տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ ոլորտներում իրականացնել մի շարք քայլեր, որոնք խթան կհանդիսանան պայմանագրի կողմ հանդիսացող երկրների միջև ինտեգրման գործընթացների հետագա խորացման համար: Հատկապես տնտեսական ոլորտում ձեռք բերված պայմանավորվածությունները հանգում էին հետևյալին.

- իրականացվող տնտեսական բարեփոխումների հիմնական ուղղությունների, փուլերի և ժամկետների փոխհամաձայնեցում, ընդհանուր շուկայի գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, տնտեսավարող սուբյեկտների ազատ տնտեսական գործունեության համար հավասար բարենպաստ պայմանների ապահովում,
- գնագոյացման համաձայնեցված քաղաքականության վարում,
- միասնական մաքսային տարածքի ստեղծմանն ուղղված աշխատանքների ավարտում մինչև 1996 թվականի վերջը,
- արտադրական կոոպերացիաների զարգացմանը, արտադրական կապիտալ ներդրումների ընդլայնմանը, ներառյալ՝ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող նպատակային ծրագրերի և նախագծերի սուբսիդավորմանն ուղղված պետական աջակցության միջոցառումների համակարգի համատեղ մշակում և իրականացում,
- դրամավարկային և արժութաֆինանսական ոլորտների քաղաքականության կոորդինացում, արդյունավետ վճարահաշվարկային համակարգի ստեղծում և այդ աշխատանքների փոխադարձ կոորդինացման նպատակով կողմերի կենտրոնական բանկերի կողմից միջբանկային միության ձևավորում,
- միասնական գիտատեխնիկական տարածքի ձևավորում,
- շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում համագործակցու-

6 Տես Соглашение о Таможенном союзе от 20 января 1995 года, [էլեկտրոնային ռեսուրս]՝ http://www.tsouz.ru/DOCS/INTAGRMNTS/Pages/Dogovor_20011995.aspx

թյան խորացում, բնապահպանական անվտանգության միասնական ստանդարտների մշակում, կիրառում և այլն[7]:

Այնուամենայնիվ, 1995թ.-ին ստեղծված Մաքսային միությունը իր ներսում առկա բազմաթիվ խնդիրների առկայության պատճառով չգործեց: Նախ՝ այն «փաստացի ոչ թե մաքսային միություն էր, այլ ազատ առևտրի գոտի»[8], քանի որ չկային միասնական մաքսային սակագներ, անդամ-պետություններում գործում էին ԱԱՀ հաշվարկման տարբեր մեթոդներ, ակցիզային հարկի տարբեր տեսակներ, իսկ մյուս կողմից էլ, անդամ երկրներն ունեին տնտեսական զարգացման տարբեր մակարդակներ, ինչը կողմերի համար առաջ էր բերում ավելի շատ տարաձայնություններ: Բացի այդ, Ղրղզստանը 1998 դարձավ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ՝ դրանով իսկ էլ ավելի խորացնելով միության՝ առանց այդ էլ առկա հակասությունները:

1999 թվականի փետրվարի 26-ին Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի և Տաջիկստանի միջև կնքվեց «Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի մասին» նոր պայմանագիր, որը, ըստ էության, հանդիսանում էր 1996 թվականի մարտի 29-ին կնքված պայմանագրի շարունակությունը: Այս պայմանագրով նշված երկրները պարտավորվում են ավարտին հասցնել Մաքսային միության ձևավորումը և դրա հիմքի վրա ստեղծել Միասնական տնտեսական տարածք, որի հիմնական նպատակներն էին.

- ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ընդհանուր շուկայի արդյունավետ գործունեությունը,
- անդամ երկրների տնտեսությունների կառուցվածքային վերափոխումների կայուն զարգացմանն ուղղված պայմանների ստեղծումը բնակչության կենսամակարդակի բարձրացման նպատակով,
- համաձայնեցված հարկային, դրամավարկային, արժութաֆինանսական, առևտրային, մաքսային և սակագնային քաղաքականության վարումը,
- միասնական տրանսպորտային, էներգետիկ և տեղեկատվական համակարգերի զարգացումը,
- տնտեսության առաջնային ճյուղերի, արտադրական և գիտական-տեխնոլոգիական կոոպերացիաների զարգացման աջակցությանն ուղղված պետական միջոցառումների ընդհանուր համակարգի ստեղծումը[9]:

Միասնական տնտեսական տարածքը նախատեսվում էր ձևավորել

7 Տես Договор между Республикой Беларусь, Республикой Казахстан, Кыргызской Республикой и Российской Федерацией и об углублении интеграции в экономической и гуманитарной областях, [էլեկտրոնային ռեսուրս]՝ http://pravo.kulichki.com/zak/megd/meg02806.htm

8 Տես Мырзахметова А.М. «Таможенный союз трех: плюсы и минусы для Казахстана». [էլեկտրոնային ռեսուրս]՝http://www.eabr.org/general/upload/docs/publication/conferences/VI_Conference/tes_mirzahmetova_14.pdf

9 Տես Договор о Таможенном союзе и Едином экономическом пространстве, [էլեկտրոնային ռեսուրս]՝ http://base.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=LAW;n=31914;fld=134;dst=1000000001,0;rnd=0.390957047464326

փուլային եղանակով: Առաջին փուլը պետք է ներառեր Մաքսային միության և Միասնական մաքսային տարածքի վերջնական ձևավորումը՝ հիմնված ազատ առևտրի ռեժիմի և արտաքին առևտրային գործունեության կարգավորման միասնական կարգի սահմանման վրա: Մաքսային միությունը, հանդիսանալով որպես առևտրատնտեսական միավորում, պետք է ունենար.

- միասնական մաքսային տարածք,
- ընդհանուր մաքսային սակագին,
- փոխադարձ առևտրում սակագնային և ոչ սակագնային սահմանափակումների (լիցենզավորում, քվոտավորում) կիրառումը չթույլատրող ռեժիմ, բացառությամբ տվյալ պայմանագրով նախատեսված դեպքերի,
- ներքին մաքսային սահմանների վրա առկա մաքսային վերահսկողության պարզեցում և հետևողական վերացում,
- տնտեսության և առևտրի կարգավորման միանման մեխանիզմներ՝ հիմնված տնտեսական օրենսդրության համապատասխանեցման և տնտեսավարման շուկայական համընդհանուր սկզբունքների վրա,
- կառավարման մարմիններ,
- միասնական մաքսային քաղաքականություն և միասնական մաքսային ռեժիմի կիառություն[10]:

Երկրորդ փուլն արդեն իսկ ենթադրում էր Միասնական տնտեսական տարածքի ձևավորում, ներառյալ ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ընդհանուր շուկայի ձևավորում, ընդհանուր տնտեսական քաղաքականության վարում և միասնական ենթակառուցվածքների ստեղծում, կողմերի օրենսդրությունների ներդաշնակեցում՝ Միասնական տնտեսական տարածքի գործունեությունն ապահովելու նպատակով:

Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի ձևավորման գործընթացի արդյունավետ իրականացման նպատակով 2000 թվականի հոկտեմբերի 10-ին Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի և Տաջիկստանի միջև կնքվեց «Եվրասիական տնտեսական ընկերակցության ստեղծման մասին» պայմանագիրը, որի շրջանակներում ձևավորվեց միջազգային ինտեգրացիոն նոր կազմակերպություն՝ Եվրասիական տնտեսական ընկերակցությունը (ԵվրԱզԷս), որի գործունեությունը պետք է ուղղվեր հետևյալ ոլորտներում առկա խնդիրների լուծմանը.

1. *արտաքին առևտրային և մաքսային քաղաքականության ոլորտ,* այդ թվում՝ ազատ առևտրի ռեժիմի լիարժեք ծավալով գրանցման, միասնական մաքսային սակագնի և ոչ սակագնային կարգավորման միջոցառումների միասնական համակարգի ձևավորման ավարտ, նախապատվությունների համաձայնեցված համակարգի ներդրում, ապրանքների և ծառայությունների առևտրի և ներքին շուկայում դրանց հասանելիության ընդհանուր կանոնների ներդրում, Առևտրի

10 Տես նույն տեղում

համաշխարհային կազմակերպության և այլ միջազգային տնտեսական կազմակերպությունների հետ անդամ-երկրների համաձայնեցված դիրքորոշման մշակում, արժութային կարգավորման և արժութային վերահսկողության միասնական կարգի ներդրում, վճարահաշվարկային հարաբերությունների գործունեության արդյունավետ մեխանիզմի ստեղծում, մաքսային կարգավորման ընդհանուր համակարգի ձևավորում, որի շրջանակներում կգործեն մաքսային ձևակերպումների և մաքսային վերահսկողության միանման կանոններ և կընդունվեն միասնական մաքսային ռեժիմներ, արտաքին տնտեսական անվտանգության, մաքսանենգության և մաքսային իրավախախտումների այլ դրսևորումների դեմ պայքարի ապահովում,

2. *տնտեսական քաղաքականության ոլորտ*, այդ թվում՝ տնտեսությունների համաձայնեցված կառուցվածքային վերափոխումների իրականացում, սոցիալ-տնտեսական զարգացման համատեղ ծրագրերի մշակում և իրականացում, ընդհանուր վճարային համակարգի ստեղծում, արժութաֆինանսական համակարգերի փոխգործակցության ապահովում, արտադրական և ձեռնարկատիրական գործունեության համար հավասար պայմանների ստեղծում, տրանսպորտային ծառայությունների ընդհանուր շուկայի և միասնական տրանսպորտային համակարգի ձևավորում, էներգետիկ ընդհանուր շուկայի ձևավորում, գիտության և տեխնոլոգիաների առաջնային ուղղությունների գծով համատեղ հետազոտությունների և մշակումների իրականացում, անդամ-երկրների շուկաներում կատարվող օտարերկրյա ներդրումների հասանելիության հավասար պայմանների ստեղծում, երկկողմ և բազմակողմ հիմքի վրա ֆինանսական-արդյունաբերական խմբերի ձևավորման, գործունեության և իրավական կարգավորման միասնական համակարգի ձևավորում,
3. *սոցիալ-հումանիտար ոլորտ*, այդ թվում՝ կրթության, գիտության և մշակույթի զարգացման ազգային համակարգերի ներդաշնակեցում, սոցիալական նվազագույն ստանդարտների ապահովման ազգային համակարգերի ներդաշնակեցում, ԵվրԱզԷս-ի անդամ պետությունների քաղաքացիների համար կազմակերպության ողջ տարածքում կրթության ստացման և բժշկական օգնության ապահովման հավասար պայմանների տրամադրում,
4. *իրավական ոլորտ*, այդ թվում՝ ազգային օրենսդրությունների մերձեցում և ներդաշնակեցում[11]:

Վերոնշյալ խնդիրների լուծման նպատակով ԵվրԱզԷս-ի շրջանակներում ձևավորվեցին ներքոնշյալ մարմինները.

- *Միջպետական խորհուրդ*, որի կազմի մեջ, որպես բարձրագույն մարմին, մտնում էին անդամ-պետությունների և դրանց կառավա-

11 Заявление глав государств Республики Беларусь, Республики Казахстан, Кыргызской Республики, Российской Федерации и Республики Таджикистан об учреждении Евразийского экономического сообщества, [էլեկտրոնային ռեսուրս]՝ http://www.evrazes.com/docs/view/2

ությունների ղեկավարները,
- *Ինտեգրման կոմիտե*
- *Միջխորհրդարանական ասամբլեա*
- *Ընկերակցության դատարան*[12]:

Փաստորեն դեռևս 1995 թվականին սկիզբ առած ռուս-բելառուսական ինտեգրացիոն համագործակցությունը դարձավ այն միջուկը, որի շուրջ տարբեր երկրների միավորումը հանգեցրեց եվրասիական տնտեսական խորը ինտեգրման գործընթացների հիմքը կազմող կարևորագույն կառույցի՝ ԵվրԱզԷս-ի ձևավորմանը:

Եվրասիական տնտեսական ինտեգրման գործընթացի ակտիվացմանն ուղղված հաջորդ քայլը 2003 թվականի սեպտեմբերի 19-ին Ցալթա քաղաքում Բելառուսի, Ղազախստանի, Ռուսաստանի և Ուկրաինայի կողմից ստորագրված «Միասնական տնտեսական տարածքի ձևավորման մասին» համաձայնագիրն էր, որը նախատեսում էր ինտեգրման խորացում միասնական տնտեսական տարածքի ստեղծման ուղղությամբ, որը նախատեսում էր մի շարք խնդիրների փուլային լուծում, այդ թվում.

- ազատ առևտրի գոտու ձևավորում առանց սահմանափակումների և բացառությունների,
- տեխնիկական կանոնակարգերի և ստանդարտների, սանիտարական և ֆիտոսանիտարական նորմերի մշակման և կիրառման սկզբունքների նույնականացում,
- մակրոտնտեսական քաղաքականության ներդաշնակեցում,
- ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժի համար պայմանների ստեղծում,
- անդամ-երկրների օրենսդրությունների (ներառյալ՝ առևտրային և մրցակցային քաղաքականության մասով) ներդաշնակեցում,
- բնական մենաշնորհների (երկաթուղային տրանսպորտի, հիմնական հեռահաղորդակցության, էլեկտրաէներգիայի, նավթի, գազի մատակարարման և այլ ոլորտներում) գործունեության կարգավորման և մրցակցային քաղաքականության միասնական սկզբունքների ձևավորում[13]:

Միասնական տնտեսական տարածքի ձևավորման աշխատանքներում Ուկրաինայի ներգրավվածության աստիճանը գնալով նվազում էր, ինչն էլ հանգեցրեց նրան, որ եվրասիական ինտեգրման գործընթացներում ակտիվ մասնակից դարձան միայն Ռուսաստանը, Բելառուսը և Ղազախստանը: Այդ իսկ պատճառով, սկսած 2007 թվականից, տարածաշրջանային ինտեգրման շրջանակներում համագործակցությունն սկսեց ընթանալ հենց նշված երկրների միջև, ինչն էլ կարելի է համարել եվրասիական տնտեսական ինտեգրման երկրորդ փուլը:

12 Договор об учреждении Евразийского экономического сообщества, [էլեկտրոնային ռեսուրս]՝ http:// http://www.evrazes.com/docs/view/3

13 Տես Договор об учреждении Соглашение о формировании Единого экономического пространства, [էլեկտրոնային ռեսուրս]՝ http://www.mid.ru/ru/maps/kz/-/asset_publisher/44tjMzWwjAFr/content/id/736678

Տնտեսական ինտեգրման խորացման, փոխադարձ առևտրում ապրանքների ազատ տեղաշարժի, ինչպես նաև երրորդ երկրների հետ Մաքսային միության առևտրի իրականացման բարենպաստ պայմանների ապահովման նպատակով 2007 թվականի հոկտեմբերի 6-ին Դուշանբե քաղաքում Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի միջև կնքվեց «Միասնական մաքսային տարածքի ստեղծման և Մաքսային միության ձևավորման մասին» պայմանագիր, որով սահմանվեցին այն միջոցառումները, որոնց իրականացումից հետո պետք է ընդունվեր պայմանագրի կողմ հանդիսացող երկրների մաքսային տարածքները մեկ միասնական տարածքի մեջ միավորելու և Մաքսային միության վերջնական ձևավորման մասին համապատասխան որոշում: Այդ միջոցառումները հանգում էին հետևյալին.

1. երրորդ երկրների հետ արտաքին առևտրի միասնական մաքսային սակագների և կարգավորման այլ միջոցառումների ընդունում և կիրառում,
2. երրորդ երկրների հետ միասնական առևտրային ռեժիմի ընդունում և կիրառում,
3. մաքսային սակագների, այլ սակագների, հարկերի և համարժեք նշանակության այլ գանձումների հաշվեգրման և բաշխման կարգի ընդունում և կիրառում,
4. ապրանքի ծագման երկրի որոշման միասնական կանոնների ընդունում և կիրառում,
5. արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագրության միասնական մեթոդոլոգիայի ընդունում և կիրառում,
6. մաքսային կարգավորման նույնականացված կարգի, ներառյալ՝ ապրանքների հայտարարագրման միասնական կանոնների և մաքսային վճարումների վճարման, ինչպես նաև միասնական մաքսային ռեժիմների ընդունում և կիրառում,
7. պայմանագրի կողմերի կողմից վերապահված լիազորությունների շրջանակներում իրենց գործունեությունն իրականացնող Մաքսային միության մարմինների հիմնում և գործունեության ապահովում[14]:

2007 թվականի հոկտեմբերի 6-ին միաժամանակ ստորագրվեց նաև «Մաքսային միության հանձնաժողովի մասին» պայմանագիրը, որով ձևավորվեց Մաքսային միության հանձնաժողովը՝ որպես Մաքսային միության գործունեությունը կարգավորող մշտական գործող մարմին, որը պետք է կատարեր Մաքսային միության Բարձրագույն մարմնի կողմից ընդունված որոշումները, իրականացներ Մաքսային միության ձևավորմանը վերաբերող միջազգային պայմանագրերի կատարման մոնիթորինգ և այլն:

«Միասնական մաքսային տարածքի ստեղծման և Մաքսային միության ձևավորման մասին» պայմանագրի ստորագրմանը հաջորդեց Միասնական տնտեսական տարածքի և Մաքսային միության իրավապայմանագրային

14 Տես Договор о создании единой таможенной территории и формировании Таможенного союза, [էլեկտրոնային ռեսուրս]՝ http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=LAW&n=93361&fld=134&dst=1000000001,0&rnd=0.5428113886239827

բազայի ձևավորման շրջանակներում միջազգային իրավական փաստաթղթերի կնքումը, այդ թվում՝ «Միասնական մաքսային սակագնային կարգավորման մասին» համաձայնագիրը, «Երրորդ երկրների նկատմամբ արտահանման մաքսատուրքերի մասին» համաձայնագիրը, «Երրորդ երկրների նկատմամբ ոչ սակագնային կարգավորման միասնական միջոցառումների մասին» համաձայնագիրը, «Ապրանքների ծագման երկրի որոշման միասնական կանոնների մասին» համաձայնագիրը, «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» համաձայնագիրը, «Մաքսային միության սակագնային արտոնություններ միասնական համակարգի մասին» արձանագրությունը, «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» պայմանագիրը և այլն, որոնք ուժի մեջ մտան 2010 թվականին:

2009 թվականի նոյեմբերի քսանյոթին ԵվրԱզԷս-ի միջպետական խորհրդի թիվ 18 և Մաքսային միության հանձնաժողովի թիվ 130 որոշմամբ ընդունված Մաքսային միության միասնական մաքսային սակագնի համաձայն[15], որը ուժի մեջ մտավ 2010 թվականի հունվարի 1-ից, սահմանվեց նաև մաքսային սակագների միասնական համակարգ: Գործող ազգային սակագները միասնական մաքսային սակագնին համապատասխանեցնելու նպատակով Ռուսաստանը նվազեցրեց շուրջ 2000 և բարձրացրեց մոտ 350 ապրանքային դիրքերի սակագներ, Բելառուսը՝ համապատասխանաբար 2000 և 700, իսկ Ղազախստանը, ընդհակառակը, ստիպված էր բարձրացնել ավելի շատ (մոտ 5000) և նվազեցնել ավելի քիչ (1130) քանակությամբ ապրանքային դիրքերի սակագներ, քան Ռուսաստանը և Բելառուսը: Արդյունքում Մաքսային միության մաքսային սակագները միջին հաշվով մոտ 1.5-2.0 անգամ գերազանցեցին Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ-պետությունների մեծ մասի սակագների միջին մակարդակին՝ չնայած այն հանգամանքին, որ միասնական մաքսային սակագինը բավարարում էր միջազգային ստանդարտներին: Պետք է նշել, որ միասնական սակագնային համակարգում չկիրառվեցին այսպես կոչված «մեգասակագներ», որոնք գերազանցում են 100%-ը և կիրառվում են ներքին շուկայի պաշտպանության նպատակով: Մեգասակագները լայնորեն կիրառվում են այնպիսի երկրներում, ինչպիսիք են ԱՄՆ-ը, որտեղ միայն ագրոպարենային ոլորտում կիրառվում է 19 մեգասակագին (ընդ որում՝ այդ երկրում նման սակագին գործում է ապրանքային անվանացանկում գտնվող գյուղատնտեսական ապրանքների ընդհանուր քանակի մոտ 2%-ի գծով): Մեգասակագներ են կիրառվում նաև ԵՄ-ում թվով 141, Ճապոնիայում՝ թվով 142 ներմուծվող գյուղատնտեսական արտադրատեսակների նկատմամբ[16]:

Այսպիսով՝ կարելի է նշել, որ Մաքսային միության փաստացի գործու-

15 Տես Единый таможенный тариф Таможенного союза Республики Беларусь, Республики Казахстан и Российской Федерации (ЕТТ), [էլեկտրոնային ռեսուրս]՝ http://www.tsouz.ru/db/ettr/tnved/Pages/default.aspx
16 Տես Ушкалова Д.И. Формирование Таможенного союза и Единого экономического пространства России, Белоруссии и Казахстана: проблемы и предварительные итоги. РАН Институт экономики, М., 2012, с. 16, [էլեկտրոնային ռեսուրս]՝ https://inecon.org/docs/Ushkalova_2013.pdf

նեությունն սկսվեց 2010 թվականի հունվարի 1-ից, որի շրջանակներում ապահովվեց միության անդամ երկրների տարածքում ապրանքների անարգել շարժը, սահմանվեցին միասնական մաքսատուրքեր երրորդ երկրների նկատմամբ, ուժի մեջ մտավ Մաքսային միության Մաքսային օրենսգիրքը և սկսեց գործել Մաքսային միության հանձնաժողովը: 2011 թվականի հունվարի 1-ից, երբ արդեն վերացվել էին ներքին սահմանների մաքսային ձևակերպումներն ու մաքսային վերահսկողությունը, փաստորեն Մաքսային միությունն արդեն գործում էր լիարժեք ռեժիմով, որտեղ ապահովված էր մաքսային և արտաքին տնտեսական քաղաքականության միասնական մեխանիզմ, ինչպես նաև միասնական իրավական դաշտ տեխնիկական կարգավորման և սանիտարական, անասնաբուժական ու ֆիտոսանիտարական միջոցառումների իրականացման ոլորտներում:

Ելնելով նախորդ տարիների ընթացքում երրորդ երկրներից ներմուծման ծավալներից՝ սահմանվեցին նաև Մաքսային միության երկրների միջև մաքսատուրքերի բաշխման չափերը՝ ըստ որոնց՝ Ռուսաստանին բաժին էր ընկնում ընդհանուր բյուջե մուտքագրված մաքսատուրքերի 87.97%-ը, Բելառուսին՝ 4.70%-ը և Ղազախստանին՝ 7.33%-ը[17]:

Փաստորեն 2010 թվականին իր գործունեությունը սկսած Մաքսային միությունը տարածաշրջանում նախկինում ձևավորված ինտեգրացիոն նախաձեռնություններից ամենահաջողվածն էր, որի մեկնարկը տրվեց պայմանագրի կնքումից ընդամենը 3 տարի անց, այն դեպքում, երբ եվրասիական տարածաշրջանում սկսված ինտեգրման մյուս գործընթացները դեռևս շարունակվում են (օրինակ՝ ԱՊՀ շրջանակներում տնտեսական միության ստեղծումը):

2010 թվականի դեկտեմբերի 9-ին ԵվրԱզԷս-ի միջպետական խորհրդի նիստի ընթացքում Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի կողմից ընդունվեց «Միասնական տնտեսական տարածքի ձևավորման մասին» հռչակագիր, ըստ որի՝ 2012 թվականի հունվարի 1-ից իր գործունեությունը պետք է սկսեր Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի Միասնական տնտեսական տարածքը: Հռչակագրում նշվում է, որ Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի զարգացումը տանում է Եվրասիական տնտեսական միության ձևավորմանը, որի նպատակն է ընդհանուր տնտեսական տարածքի ստեղծմամբ այլ երկրների, միջազգային տնտեսական միավորումների և Եվրոպական միության հետ ներդաշնակ, փոխլրացնող և փոխշահավետ համագործակցության ապահովումը[18]:

Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ երկրները 2010 թվականի դեկտեմբերի 9-ին ստորագրեցին նաև «Համա-

17 Տես Соглашение об установлении и применении в Таможенном союзе порядка зачисления и распределения ввозных таможенных пошлин (иных пошлин, налогов и сборов, имеющих эквивалентное действие), [էլեկտրոնային ռեսուրս]՝ http://www.tsouz.ru/MGS/mgs21-05-10/Pages/Sogl_o_mexanizme_zachisl_poshlin.aspx

18 Տես Декларация о формировании Единого экономического пространства Республики Беларусь, Республики Казахстан и Российской Федерации, [էլեկտրոնային ռեսուրս]՝ http://www.eaeunion.org/#about-history

ձայնեցված մակրոտնտեսական քաղաքականության մասին» համաձայնագիր: Համաձայնագրով, որը կրկին ուժի մեջ մտավ 2012 թվականի հունվարի 1-ից, սահմանվեցին անդամ երկրների տնտեսական զարգացման կայունությունն ապահովող հետևյալ քանակական չափանիշները.

- պետական բյուջեի պակասուրդը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3%-ը,
- պետական պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 50%-ը,
- գնաճի մակարդակը չպետք է գերազանցի Միասնական տնտեսական տարածքի ամենացածր գնաճ ունեցող մասնակից երկրի գնաճի մակարդակից 5 տոկոսային կետով[19]:

Ինչպես տեսնում ենք, Միասնական տնտեսական տարածքի ձևավորման հիմքում դրվեց 1992թ. կնքված Մաաստրիխտյան համաձայանգրով ամրագրված եվրոպական արժութային ինտեգրման դասական մոտեցումը այն տարբերությամբ, որ եվրոպական արժութային համակարգի դեպքում պետական պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 60%-ը, որը փաստորեն առավել մեղմ չափանիշ է, մինչդեռ գնաճի մակարդակի պահպանման պայմանն ավելի խիստ է, քանի որ, ի տարբերություն Միասնական տնտեսական տարածքի, Մաաստրիխտյան համաձայնագրով գնաճի առավելագույն թույլատրելի շեմը կազմում է գնաճի ամենացածր մակարդակ ունեցող երեք երկրների մակարդակից ընդամենը 1.5%-ով ավել: Բացի այդ, եվրոպական արժութային ինտեգրման դեպքում առկա են նաև երկարաժամկետ տոկոսադրույքի պահպանման չափանիշ, ըստ որի՝ վերջինս անդամ երկրների միջին տոկոսադրույքից չպետք է գերազանցի ավելի, քան 2%-ով, ինչպես նաև արժութային փոխարժեքների փոխադարձ տատանման առավելագույն սահմանի (+/-15%) պահպանման պահանջ:

Հիմք ընդունելով ԵվրԱզԷս-ի շրջանակներում Մաքսային միության հաջող գործունեությունը և հաշվի առնելով 2012 թվականի հունվարի 1-ից իր աշխատանքը մեկնարկող Միասնական տնտեսական տարածքի ձևավորման իրավական հիմքում ընկած միջազգային պայմանագրերի ուժի մեջ մտնելը՝ Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի նախագահները 2011 թվականի նոյեմբերի 18-ին ընդունեցին «Եվրասիական տնտեսական ինտեգրման մասին» հռչակագիր, որը նախատեսում էր անցում ինտեգրման գործընթացի հաջորդ փուլ, այն է՝ Եվրասիական տնտեսական տարածքի ձևավորում, որտեղ պետք է ապահովվեր ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատանքային ռեսուրսների ընդհանուր շուկայի արդյունավետ գործունեությունը: Հատկանշական է, որ հռչակագրում նշվում է, որ Եվրասիական տնտեսական տարածքի մասնակից պետությունները իրենց համագործակցության շրջանակներում ղեկավարվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության նորմերով և կանոններով՝ կարևորելով այդ կազմակերպությանը բոլոր երեք երկրների անդամակցումը[20]: Մաքսային

19 Տես Соглашение о согласованной макроэкономической политике, [էլեկտրոնային ռեսուրս]՝ http://www.eurasiancommission.org/ru/act/integr_i_makroec/dep_makroec_pol/Documents/Соглашение%20о%20согласованной%20макроэкономической%20политике.pdf

20 Տես Декларация о евразийской экономической интеграции, [էլեկտրոնային ռեսուրս]՝ http://kremlin.

միության և Միասնական տնտեսական տարածքի գործունեության ապահովման և զարգացման նպատակով 2011 թվականի նոյեմբերի 18-ին երկրները կնքեցին նաև «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» պայմանագիրը, որով ձևավորվեց եվրասիական տնտեսական հանձնաժողովը՝ որպես Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի կարգավորման միասնական մշտապես գործող մարմին[21]:

Այսպիսով՝ 2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտան Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Միասնական տնտեսական տարածքի իրավական հիմքը կազմող միջազգային պայմանագրերը, և փաստացի սկսեց գործել Միասնական տնտեսական տարածքը, որտեղ նախատեսվում էր ապահովել ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժ անդամ երկրների միջև: Այն նաև հիմք էր ստեղծում մակրոտնտեսական, մրցակցության, արդյունաբերության, տրանսպորտի, էներգետիկայի և մի շարք այլ ոլորտներում փոխհամաձայնեցված գործընթացներ իրականացնելու համար: 2012 թվականի հունվարի 1-ից սկսեց գործել նաև ԵվրԱզԷս-ի Դատարանը, իսկ 2012 թվականի փետրվարից՝ եվրասիական տնտեսական հանձնաժողովը:

2014 թվականի մայիսի 29-ին Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ-պետությունների նախագահները Աստանայում կայացած Եվրասիական բարձրագույն խորհրդի նիստում ստորագրեցին «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիր, որով Ռուսաստանը, Բելառուսը և Ղազախստանը որոշեցին 2015 թվականին հունվարի 1-ից անցում կատարել տնտեսական ինտեգրման առավել խորը մակարդակին՝ ստեղծելով Եվրասիական տնտեսական միություն:

2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագիրը, իսկ 2014 թվականի դեկտեմբերի 23-ին Մոսկվայում՝ «Ղրղզստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագիրը: Ի դեպ, 2014 թվականի հոկտեմբերի 10-ին Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի և Տաջիկստանի նախագահները, հաշվի առնելով 29.05.2014թ. ստորագրված «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիրը, ստորագրեցին նաև «Եվրասիական տնտեսական ընկերակցություն գործունեության դադարեցման մասին» պայմանագիրը, որով 2015 թվականի հունվարի 1-ից նախատեսվում էր դադարեցնել ԵվրԱզԷս-ի և նրա մարմինների գործունեությունը: ԵվրԱզԷս-ի գործունեության դադարեցմամբ իրենց ուժը կորցրին նաև մի շարք միջազգային պայմանագրեր և համաձայնագրեր, այդ թվում՝ 1999 թվականի փետրվարի 2-ին ստորա-

ru/supplement/1091

21 Տես Договор о Евразийской экономической комиссии, [էլեկտրոնային ռեսուրս]՝ http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc&base=LAW&n=121990&fld=134&dst=1000000001,0&rnd=0.8433977955831393

գրված «Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի մասին» պայմանագիրը[22]:

Եվրասիական տնտեսական միությունը (ԵԱՏՄ), որի փաստացի գործունեությունը սկսվել է 2015 թվականի հունվարի 1-ից, բացի ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժի ապահովումից, նախատեսում է նաև տնտեսության տարբեր ոլորտներում կոորդինացված, համաձայնեցված և միասնական քաղաքականության իրականացում: Այն, իր դրական և բացասական դրսևորումներով հանդերձ երկրների միջև տնտեսական փոխհամագործակցության և ինտեգրման թերևս ամենաբարձր մակարդակ ունեցող կառույցն է, որ երբևէ ձևավորվել է եվրասիական տարածաշրջանում: Կարծում ենք, որ եվրասիական տնտեսական տարածքի, մասնավորապես ԵԱՏՄ-ի՝ որպես տարածաշրջանային ինտեգրացիոն միավորման դանդաղ զարգացման տեմպերը պայմանավորված են եղել այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են.

- ինտեգրվող երկրների հասարակական լայն աջակցության բացակայությունը. ի տարբերության Եվրոպական Միության անդամ երկրների, որտեղ ԵՄ-ին անդամակցության որոշումը կայացվում է հանրաքվեների արդյունքում՝ ԵԱՏՄ-ի դեպքում կազմակերպությանը միանալու որոշումը կայացվել է անձամբ մասնակից երկրների ղեկավարների կողմից, ինչը երբեմն առանձին պետությունների հասարակությունների կողմից այդքան էլ ողջունելի չի եղել,
- երկրների վերադարձի վախը դեպի «ժամանակակից Խորհրդային Միություն»՝ պայմանավորված անկախության կամ ինքնիշխանության մակարդակի նվազման մտայնությամբ,
- անդամ պետությունների աշխարհագրական սահմանների ընդհանրության բացակայությունը (խոսքը վերաբերում է Հայաստանին), ինչը երկրների միջև տնտեսական ինտեգրման կարևորագույն նախադրյալներից մեկն է, որը հնարավորություն է ընձեռում զերծ մնալ հավելյալ տրանսպորտային ծախսերից, տարանցիկ փոխադրումների և այլ լրավճարներից և ի վերջո ժամանակի կորստից:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ եվրասիական տնտեսական ինտեգրման գործընթացների մասնակից երկրներում առկա են եղել սկզբունքային նախադրյալներ, որոնք, այնուամենայնիվ, նպաստել են ԵԱՏՄ ձևավորմանը: Դրանք են.

1. անդամ պետությունների պատմական զարգացման ուղիների ընդհանրությունը,
2. հետխորհրդային երկրների միջև նախկինից ժառանգած առևտրատնտեսական և էներգետիկ ավանդական կապերի առկայությունը,

22 Տես Договор о прекращении деятельности Евразийкого Экономического Сообщества [էլեկտրոնային ռեսուրս]՝ https://www.google.am/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=1&cad=rja&uact=8&ved=0ahUKEwjW0dDPvInLAhUmYJoKHX-MAwAQFggZMAA&url=http%3A%2F%2Fpublication.pravo.gov.ru%2FDocument%2FGetFile%2F0001201410210019%3Ftype%3Dpdf&usg=AFQjCNFh_zDOAOzTQ0rqYTCnoDvheypmyA&bvm=bv.114733917,d.bGs

3. անդամ պետությունների միջև քիչ թե շատ գործող տնտեսական կապերի և տնտեսական ինտեգրման համակցված հնարավորությունների շնորհիվ հետագա տնտեսական աճի ապահովման կանխատեսումները,
4. ինտեգրման գործընթացների հիմնական նախաձեռնող Ռուսաստանի հետ առկա սերտ առևտրատնտեսական և քաղաքական կապերի առկայությունը,
5. որոշ անդամ պետությունների դեպքում տարածաշրջանային տնտեսական ինտեգրման այլընտրանքային առավել արդյունավետ ինտեգրացիոն կառույցներին անդամակցելու անհնարինությունը կամ բարդությունը,
6. մշակութային փոխըմբռնման, լեզվական, երբեմն նաև՝ ազգային մտածողության ընդհանրությունը:

Այսպիսով՝ չնայած 1994 թվականից հետո հետխորհրդային տարածաշրջանում ինտեգրման գործընթացների ձևավորման բազմաթիվ փորձերին՝ կարելի է ասել, որ դրանց իրական սկզիբը դրվեց 2000 թվականին ԵվրԱզԷս-ի ստեղծման մասին պայմանագրի կնքմամբ, որն էլ դարձավ ԵԱՏՄ-ի ձևավորման տնտեսական հիմքը: Իհարկե, ի սկզբանե այդպիսի վերպետական կառույց դառնալու հավակնություն ուներ նաև 1991 թվականին հիմնադրված Անկախ Պետությունների Համագործակցությունը (ԱՊՀ), սակայն «նախկին խորհրդային հանրապետություններում ԱՊՀ-ի ձևավորումը դիտվում էր որպես քաղաքակիրթ ապահարզանի մեխանիզմ»[23], որտեղ ընդունված որոշումները ոչ միշտ էին կյանքի կոչվում, ինչը չէր արտացոլում անդամ-պետությունների իրական կամքը՝ ձևավորելու վերպետական մակարդակի ինտեգրացիոն կառույց: Իսկ ԱՊՀ հետագա անհաջողության պատճառն այն էր, որ ինտեգրման նպատակով վերպետական միավորման ստեղծումը տեղի չունեցավ պետությունների տնտեսական պրագմատիզմի և տնտեսական հետաքրքրությունների, ինչպես նաև հավասարության և ինքնիշխանության նպատմամբ հարգանքի հիման վրա:

23 աղբյուրը՝ http://izvestia.ru/news/386439

ИСТОРИЧЕСКИЙ ОБЗОР ФОРМИРОВАНИЯ ЕРВАЗИЙКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА

Мисак Авагян
Преподаватель Европейской региональной образовательной академии, кандидат экономических наук, доцент

После распада СССР было предпринято множество попыток интеграционного сотрудничества, основной целью которого являлось формирование таможенного союза или общего рынка. Несмотря на эти попытки, их реальное начало было заложено в 2000 году подписанием договора о создании ЕрвАзЭс, ставшего основой для формирования Евразийского экономического союза. ЕАЭС, фактическая деятельность которого началась 1-го января 2015 г., кроме обеспечения свободного движения товаров, услуг, капитала и рабочей силы, предусматривает также осуществление скоординированной, согласованной и единой политики в различных сферах экономики. Наряду со своими положительными и отрицательными проявлениями, он является структурой самого высокого уровня из когда-либо формированных в евразийском регионе, осуществляющей сотрудничество и интеграцию стран-членов.

Ключевые слова: Интеграция, таможенный союз, общий рынок, взаимная торговля, кооперация, экономический реформ, конкуренция, мировой рынок, наднациональная структура.

HISTORICAL REVIEW OF THE EURASIAN ECONOMIC UNION FORMATION

Misak Avagyan
Lecturer at European Regional Educational Academy, Ph.D. in economics, Associate professor

After the collapse of the USSR, there were made numerous attempts on integration cooperation, aimed at the formation of customs union or common market. Despite these attempts, their actually started to act in 2000 by signing an agreement on the creation of the EurAsEC, and it became the basis for the formation of the Eurasian Economic Union. The EAEC, which began its activity on January 1, 2015, in addition to ensuring free movement of goods, services, capital and labor, also provides for a coordinated, coherent and unified policy in various spheres of the economy. Along with its positive and negative manifestations, it is the structure of the highest level ever formed in the Eurasian region, which implements cooperation and integration of member countries.

Key words: Integration, customs union, common market, mutual trade, cooperation, economic reforms, competition, world market, supranational structure.